

ԴԱՍ 7.

Ներողամտություն

Ներածություն

Բանալի համարներ

ՄԱՍ 7.1 Ինչ է ներումը

ՄԱՍ 7.2 Հիսուսի արյունը

ՄԱՍ 7.3 Ինչու ներել ուրիշներից

Կիրառություն

Նշումների
համար

Ներածություն

Նոզևոր աճի վերաբերյալ մեր երկրորդ թեման *Ներողամարտությունն* է: Երբ ինչ–որ մեկն իմանում է, որ ինքը ներված է, քաջալերվում և կրկին ապահով է զգում: Նա կրկին վստահություն է ձեռք բերում և ազատ է՝ արտահայտելու իր երախտագիտությունը՝ պատրաստ լինելով հնազանդության: Այս նույն ձևով Հայր Աստծո կողմից ներված լինելու փաստը պետք է հնազանդության պտուղ տա մեր մեջ: Այսպիսով՝ հնազանդությունը ոչ թե բեռ է, այլ ներման արդյունքում ունեցած ուրախության արտահայտություն: Աստծո ներումը իր հետ բերում է հավատք, վստահություն, համարձակություն և ուժ: Ուստի, շատ կարևոր է, որ քրիստոնյան սովորի ապրել այն փաստով, որ ինքը ներված է:

«Երանի նրան, որի անօրենությունը թողվեցավ, և որի մեղքը ծածկվեցավ: Երանի այն մարդին, որ Տերն անօրենությունն չի համարում և նենգություն չկա նրա հոգու մեջ»: (Սաղմ. 32:1, 2)

Մրանք Դավթի Խոսքերն են: Նա պետք է սովորեր ընդունել ներումը այն բանից հետո, երբ երկու սարսափելի մեղք (շնություն և սպանություն) զործեց: Ներումն ընդունելով՝ նրա մեջ վերականգնվեց Աստծո ուրախությունն ու խաղաղությունը:

Բանալի համարներ

Սաղմ. 32	Սաղմ. 51
Ա Հովհ. 1:5–9	Եբր. 9:22
Եփես. 4:32	Մատթ. 6:14,15
Դուկ. 6:37–38	Մարկ. 11.25
Մատթ. 18:21–35	

ՄԱՍ 7.1 ԻՆՉ Է ՆԵՐՈՒՆՂ

«Աստված լույս է, և ոչ մի իսավար չկա նրանում: Եթե ասենք, թե հաղորդություն ունենք նրա հետ և իսավարի մեջ մասն զանք, սույր ենք ասում և ճշմարտությունը չենք անում: Բայց եթե լույսի մեջ մասն զանք, ինչպես նա է լույսի մեջ, հաղորդություն ունենք նրա հետ և նրա որդի Հիսուս Քրիստոսի արյունը սրբում է մեզ ամեն մեղքից: Եթե ասենք, թե մեղք չունենք, մեր անչեղբր խաբում ենք, և ճշմարտություն չկա մեզանում: Ապա թե մեր մեղքերը խոստովանենք, նա հավատարիմ է և արդար, որ մեր մեղքերը թողնե մեզ, և սրբե մեզ ամեն անհրաժեշտությամբ» (Ա Հովհ. 1:5–9):

Ապրել ներման մեջ նշանակում է լինել Աստծո հետ փոխհարաբերության մեջ: Այնտեղ կա սեր, խաղաղություն և Աստծո հանդեպ անկեղծություն:

«Միտո մեջ վախ չկա: Այլ կատարյալ սերը հեռացնում է վախը, որովհետև վախը փանջանք ունի: Այն մարդը, ով վախենում է, կատարյալ չէ սիրո մեջ»: (Ա Հովհ. 4:18)

Աստված լույս է, և երբ քայլում ենք Նրա լույսի մեջ, քայլում ենք Նրա և մյուս հավատացյալների հետ հաղորդակցությամբ: Այդ ժամանակ ապրում ենք այն փաստով, որ մենք ներված ենք:

Նշումների
համար

Նշումների համար

Երբ դուրս գանք Աստծո լույսից, մենք կհայտնվենք խավարում: Վտանգավոր է ապրել խավարում, քանի որ չենք կարող ասել, թե ուր կգնանք: Մեր հաղորդակցությունը մեր երկնավոր Հոր և այլ հավատացյալների հետ կխզվի:

Սատանայի ցանկությունը մեզ Աստծո լույսից դուրս բերելն ու խավարի թագավորության մեջ տանելն է: Նա գործածում է շատ միջոցներ, ինչպիսիք են հոգնածությունը, վախը, գաղջ լինելը, ըմբոստությունը, հիասթափությունը, վիրավորանքը, ցավը և դառնությունը: Սատանան գիտի մեր խոցելի տեղերը և հենց այդ տեղի վրա էլ հարձակվում է՝ փորձելով տանել մեզ ապրելու խավարի մեջ: Մա պատճառ է դառնում, որ կորցնենք Աստծո հետ մեր ունեցած խաղաղությունը:

Ինչևէ, կոտրված փոխհարաբերությունը Հոր հետ կարող է վերականգնվել Հիսուս Քրիստոսի միջոցով, որը մեր բարեխոսն է Աստծո մոտ (Ա Հովհ. 2:1–2): Մեր բարեխոսը կամ դատապաշտպանը կստանձնի գործն այն պահին, երբ մենք ներողություն խնդրենք: Նա կների մեր մեղքը և կվերականգնի Հայր Աստծո հետ փոխհարաբերությունը: Քրիստոսը վերցրեց մեր բոլոր մեղքերն իր վրա և մեռավ: Երբ խոստովանում ենք մեր մեղքերը, ի վիճակի ենք դառնում ստանալ Նրա ներումը: Աստված խոստացել է մեզ այնպիսի ներում, որն այնքան կատարյալ է, որ մեր մեղքերն այլևս չեն հիշվում (Երեմ. 31:34):

Ա Հովհ. 2:1–ն ասում է.

«Իմ սիրելի որդիներ, սա գրում եմ ձեզ, որ չմեղանչեք»:

Ապրել ներման մեջ նշանակում է քայլել լույսի մեջ, և դա ապահովում է մեր պաշտպանությունը: Պողոսն ասում է, որ *մենք ազատ ենք խավարի իշխանությունից* (Կող. 1:13): Մեր փոխհարաբերությունը Հիսուսի հետ տալիս է մեզ հավատք և հաղթանակ մեղքի նկատմամբ, և Սուրբ Հոգին կսրբացնի մեզ դրա միջոցով:

«Եվ նրան, ով կարող է անարատ պահել ձեզ և անկեղծ կանգնեցնել իր փառքի առջև անբիծ ցնծությունով: Այն մեկ իմաստունն Աստծուն և մեր Փրկչին մեր Տեր Հիսուս Քրիստոսով փառք և մեծություն, գորություն և իշխանություն, բոլոր դարերից առաջ և հիմա և հավիյրյալս: Ամեն» (Հուդա 24, 25):

ՄԱՍ 7.2 Հիսուսի արյունը

Ներումը չէր կարող առանց արյունի թափելու լինել (Եբր. 9:22): Աստծո օրենքն ասում է, որ մեղքի վարձքը մահն է (Եզեկ. 18:4, Հռովմ. 6:23): Հիսուս Քրիստոսը՝ միակ անմեղ մարդը, պետք է չարչարվեր, որ փրկեր մեզ մեղքի հետևանքներից և վերադարձներ Աստծո մոտ (Ա Կորնթ. 15:3, Ա Պետ. 3:18): Միայն Հիսուսի արյան միջոցով է, որ մենք սրբվում ենք մեղքից: Մենք արդարացվում ենք Քրիստոսի արյամբ: Փրկագնումը Աստծո ծրագիրն է: Մենք մեր ուժերով չենք կարող արդարանալ: Հիսուսը վճարեց մեր պարտքերը խաչի վրա, և Նրա արդարությունը փոխանցվեց մեզ: Խաչը Աստծո սիրո դրսևորման գերագույն փաստն է (Հռովմ. 5:8):

ՄԱՍ 7.3 Ինչու ներել ուրիշներին

Այն քրիստոնյան, որն անձնապես ստացել է Աստծո ներումը Արի մեղքի համար, պետք է ների նաև ուրիշներին: Մատթ. 18:21–35 առակում Հիսուսը նախազգուշացնում է.

«Ասրծո թագավորության մեջ անկարելի է ներման արժանանալ, եթե դու չես կամենում ներել ուրիշներին»:

Ստանալով Աստծո ներումը՝ Սուրբ Հոգին քեզ ընդունակ կդարձնի ներել ուրիշներին: **Ուրիշներին ներելն այն պարտքն է, որը գալիս է Ասրծուց ներված լինելու արդյունքում:**

«Պեպոք չէ՞ր, որ դու էլ քո ծառայակցին ողորմեիր, ինչպես որ ես էլ քեզ ողորմեցի» (Մատթ. 18:33):

Ինչևէ, ուրիշներին ներելը երբեմն շատ դժվար է: Պետրոսը տվեց այս հարցը Հիսուսին:

«Տեր, քանի անգամ ներեմ իմ եղբորը, եթե նա իմ դեմ մեղք անե. մինչև յո՞թն անգամ» (Մատթ. 18:21):

Նշումների
համար

Նշումների համար

Սա մի հարց է, որ բոլորս ենք տալիս, քանի որ շատ հաճախ դժվարանում ենք ներել ուրիշներին: Աններողամտության պատճառ կարող են հանդիսանալ.

- Հիասթափությունը:
- Դառնությունը:
- Հպարտությունը:
- Ներված լինելու փորձառություն բացակայությունը:
- Դաստիարակությունը:

Եվ բացի այս, միգուցե այլ պատճառներ էլ կան, թե ինչու ենք դժվարանում ներել: Այնուամենայնիվ, Հիսուսն ասում է.

«Ես ասում եմ ձեզ, ոչ թե յոթ անգամ, այլ 77 անգամ յոթ» (Մատթ. 18:22):

Հիսուսը շատ պարզ է ասում, որ **պեղոք է միշտ** ներենք: Ինչո՞ւ:

Կան երկու կարևոր պատճառներ.

1. Մատթ. 6:14,15–ում Հիսուսը նշում է.

«Որովհետև եթե դուք մարդկանց իրենց հանցանքները բողոք, ձեր երկնավոր Հայրն էլ ձեզ կների: Բայց եթե դուք չներեք մարդկանց իրենց սխալները, ձեր Հայրն էլ ձեր մեղքերը չի ների»:

Հիսուսը շատ հստակ է բացատրում ներման հետևանքը: Եթե չենք ներում ուրիշներին, ապա Հայրն էլ մեզ չի կարող ներել:

«Եվ իրար հեղք քաղցր եղևք, գրած՝ իրար ներելով, ինչպես էլ Աստված Քրիստոսով ձեզ ներեց»: (Եփես. 4:32)

Միշտ պատրաստ եղիր ներել: Դու պատասխանատու ես Աստծո առաջ՝ կոտրված փոխհարաբերությունները վերականգնելու համար, անկախ նրանից, թե ով է մեղավորը, և թե քանի անգամ են ուրիշները քո հանդեպ մեղանչել (Գուկ. 17:3, 4):

Եթե մենք չներենք, Աստված էլ մեզ չի ների, և հետևապես, չենք աճի մեր հավատքի մեջ: Հավատքը և ներումը իրար հետ են քայլում: Քրիստոսի մեջ հավատքով ենք մենք ներում ստանում, և երբ ընդունենք այս ներումը, մեր հավատքը կաճի:

2. Դուկ. 6:37-ում Հիսուսն ասում է.

«Արձակեք, և արձակված կլինեք»:

Ուրիշներին չներելը կարող է հպարտության կամ էլ ինքնահավանության նշան լինել, որն արգելում է հավատքով Աստծուց ներում ստանալուն: Երբ չենք կամենում ներել, թույլ ենք տալիս, որ դառնությունը արմատանա մեր մեջ՝ դրանով իսկ ճանապարհ հարթելով Սատանայի համար, որ նա գա մեր կյանքի մեջ և շարունակի իշխել այդ իրավիճակի վրա: Մենք կարող ենք ազատ արձակվել դրանից՝ այդ մարդկանց ներելով, անկախ նրանից, թե որքա՞ն ճիշտ ենք մենք, կամ էլ որքա՞ն սխալ են նրանք: Այս քայլը թույլ կտա, որ Աստված վերականգնի և բժշկի մեզ: Դառնությունը Սատանայի զենքն է: Այսպիսով՝ թո՛ւյլ մի տուր, որ այն արմատանա քո մեջ: (Եբր. 12:14,15)


Հիսուսն ասում է, որ այնքանով, որքանով կարողանում ենք ներել ուրիշներին, ցույց է տալիս, թե որքանով ենք ինքներս ներված: Այսպիսի օրինակ տեսնում ենք Դուկ. 7:36-50-ում: Փարիսեցիները չէին սիրում Հիսուսին և ոչ մի երախտագիտություն ցույց չէին տալիս նրա հանդեպ: Մեղավոր կինը Հիսուսի ոտքերը լվաց իր արցունքներով, մաքրեց իր մազերով, համբուրեց և օժեց անուշահոտ յուղով: Եվ 47-րդ Խոսքում Հիսուսն ասում է.

«Նրա մեղքերը ներված են, քանի որ շատ սիրեց: Բայց որին որ քիչ է ներվում, նա քիչ է սիրում»:

Ոչ ոք երբեք այնքան անարդարությունից չի տառապել, որքան Հիսուսը: Անմեղ լինելով՝ Նա մահվան դատապարտվեց և զամվեց խաչին: Սակայն խաչի վրա Նա աղաղակեց.

«Հայր, ների՛ր նրանց, որովհետև չեն հասկանում ինչ են անում» (Դուկ. 23:34):

Ուստի մենք ոչ մի հիմնավոր պատճառ չունենք ուրիշներին չներելու: Նրա սիրո շնորհիվ մեր սրտերում պետք է ունենանք ներող հոգի և.



Նշումների համար

- Ներողամտություն (Մատթ. 6:15)
- Ուրախություն (Մաղմ. 32)
- Բժշկություն (Հակ. 5:16)
- Մեր (Ա Կորնթ. 13:4-7)
- Հոգևոր աճ (Ա Կորնթ. 3:1-4):

Նախաբան

1. Պատասխանատվություն վերցրու Աստծո առաջ՝ ամեն օր խնդրելով, որ Սուրբ Հոգին ցույց տա մեղքեր, որոնք միգուցե երբեք չեն խոստովանվել, և միգուցե քո սրտում դեռ քաքնված վիրավորանքներ կամ դառնություններ կան: Եթե Նա հանդիմանի քեզ մեղքի համար, խոստովանի՛ր դրանք անկեղծորեն, ապա շնորհակալություն հայտնի՛ր Աստծուն Իր ներման համար:

2. Եթե դու վիրավորել ես ինչ-որ մեկին, ապա պետք է.
 - ա) Խնդրես, որ այդ անձը ների քեզ:
 - բ) Փնտրես ճանապարհներ՝ վերականգնելու այն վնասը, որ դու ես պատճառել (Մատթ. 5:23, 24):

3. Եթե ինչ-որ մեկն է քեզ ցավ պատճառել և վնասել ձեր փոխհարաբերությունը, ապա մտածի՛ր հետևյալ հնարավոր բաների մասին.
 - ա) Այդ մարդը տեղյակ չէ, թե ինչ է կատարվել: Աղոթի՛ր և իրավիճակը հայտնի՛ր Աստծուն, և լուրջամբ ների՛ր նրան:
 - բ) Այդ մարդը տեղյակ չէ, թե ինչ է պատահել, բայց լավ կլիներ, որ իմանար: Աստծուց իմաստություն խնդրի՛ր, ապա սիրով խոսի՛ր նրա հետ՝ բացատրելով, թե նրա արարքը ինչպիսի ցավ է քեզ պատճառել, և ների՛ր նրան:
 - գ) Այդ մարդը տեղյակ է, թե ինչ է պատահել, և ներողություն է խնդրում: Ների՛ր նրան. ուրիշներին ներելը խոնարհություն է պահանջում:

4. Հիմա մենք ազատ ենք՝ ապրելու Աստծո ներմամբ, և սա պատճառ կհանդիսանա, որպես աշակերտներ, աճել հավատքի, զորության և համարձակության մեջ:

*Նշումների
համար*

